

— Rastih hana mano val ruban-i napšman rastih va apiriptarih satunet.

— Prehbut-minišnih hana mano gētih pavan mahimanih va minōi pavan mostgir yahsunet, va kamak madam zak mandum yedrunad mano parjam vašovašnih, tan po-hal va patpraç* ruban azaš yehvunet.

— Va parih hana mano bahar-i tan min tan va bahar-i ruban min ruban laxvar yahsunet.

— Va drujih hana mano tan pavan kamak va ruban pavan prîp yahsunet.

8. Pavan vehih mano buniktar?

— Zak mano danaktar.

9. Mano danaktar?

— Zak mano farjam-i tan xavitunet va hamimalihi⁵³ ruban šnaset va napšman-tan min hamimalih-i ruban natruntan va avibim daštan avirtar⁵⁴ xavitunet.

10. Maman farjam-i tan? Katam zak hamimal mano danakan pataš avirtar tuban šnaxtan?

— Farjam-i tan va šovašn-i karp⁵⁵, va hamimali-i rôban denman and druj-i ganak-minōi pavan piriptan va niayizan kartan martuman-râ pavan hamestarih-i pavan martuman fraz yehbunt.

11. Katar va cand zak druj?

— 1. Az, 2. va niayiz, 3. va hešm, 4. va arešk, 5. va nang, 6. va varun, 7. va kin, 8. va bošasp, 9. va druj-i aharmokih, 10. va spazgih.

12. Min denman and druj katam stamektar⁵⁶?

Ռաստութիւն այն է որ (մարդ) իւր անձը ուզիլ եւ անվրէպ վարէ (չխոտորի ճշմարտութենէ) :

Վրէպիմացութիւնն այն է որ աշխարհքը հիւրանոց եւ հանդերձեալը արգելան համարելով կամենայ (մարդ) այնպիսի բաներու ետեւէ երթալ որոնց վախճանն ապականութիւն է եւ որոնց երեսէն) մարմինը կամըջի (վրայ կը վտանգի) եւ պատուհաս* հոգւոյն կը հասնի :

Եւ պարկութիւն այն է որ բաժին մարմնոյ մարմինէն եւ բաժին հոգւոյ հոգիէն զլացուի :

Եւ դրժութիւն այն է որ մարմինը (իւր) կամքին եւ հոգին վրիպանաց մէջ ձգուի :

Վեհութեան մէջ ո՞վ աւելի բնիկ⁵² :

Ով որ իմաստնազոյն է :

Ո՞վ իմաստնազոյն :

Այն որ զվախճան մարմնոյ գիտէ եւ գմրցակցութիւն հոգւոյ կը ճանաչէ եւ ինքզինքը ի հակառակորդաց հոգւոյն ազատել եւ աներկիւզ պահելու առաւելագոյն հոգ կը տանի :

Ի՞նչ է վախճան մարմնոյ . ո՞վ այն մրցակից (ոտոխ) գոր իմաստունք ապարթար կանն ճանաչել :

Վախճան մարմնոյ եղծումն (է) կերպի եւ ոտոխ հոգւոյ՝ (այն) մի քանի դրուժք (են) Գանակ-Մինով (որ) վրիպեցնելու եւ նիւզ ընելու համար գմարդիկ երանաւէտ վայելքէն՝ մարդոց վրայ կը յարձակին :

Որոնք եւ քանի՞ (են) այն դրուժները :

- 1. Ազահութիւն, 2. եւ նիւզութիւն, 3. եւ ցասումն, 4. եւ նախանձ, 5. եւ նենգ, 6. եւ շարակնութիւն, 7. եւ քէն, 8. եւ ծուլութիւն, 9. եւ դրուժ քսութիւն, 10. եւ զրպարտութիւն :

Այս մի քանի դրուժներէն ո՞րն աւելի ստամբակազոյն (է) :

(Շարունակելի) :

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅ ՄՁԵԿՈՒԹՆԵՐԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ

(Շարունակութիւն) :

Երբ այսպէս մտածեմք, յիշուի պէտք է գործէ քաշուիմք իսպառ եւ շարունակեմք մեր նիւթական անփոյթ կեանքը, որ զմեզ ցարդ մեռելական վիճակի մէջ պահած է : Սակայն երբ միւս կողմէն անցեալ դարերու վերայ դարձնեմք մեր աչքերը, բնեմք մեծագործ կանանց յաղթանակները, որով իրենց հայրենիքը փրկեցին եւ մարդկութեան յառաջադիւստեանը նպաստեցին, երբ մեզ ներկայանան Յուդիթ, Եսթեր, Ժան տ'Արք եւ Եղիշէի յիշած փափկասուն տիկիներն Հայոց աշխարհին, ո՞հ, եռանդով կը լցուիմք եւ մեր բարձր կարողութիւնը նանչնալով կըրնամք ըսել . Աշխատի՛մք, որպէս զի պարտաւոր չմնամք ազգին եւ մարդկութեան աշխատի՛մք, որպէս զի մեր գաւառացի բոյրերը լոյս առնուն . աշխատի՛մք, որպէս զի մեր հայրենիքը փրկեմք եւ աշխատի՛մք, որպէս զի իզական սեռը մարդկութեան մէջ տեղ մի բռնէ : Իրաւ, դժուար է բարիք գործել . բարեգործութիւնը փշալից վարդ մի է, ով որ մերձենայ անոր՝ ձեռքերը կ'արկենին : Իրաւ, երբ մեք մեր Հայաստանը փրկելու համար ճամբայ կ'ենթեմք, շատ մեծ վտանգներ ունիմք . ահազին անտաններէ պիտի անցնիմք, ուր թշնամի գազաններ իրենց ահարկու մոնչիւններով պիտի ջանան ահարկել զմեզ . ծովերէ պիտի անցնիմք ձմեռ ժամանակի մէջ եւ ատելութեան մըրիկներն ու նախանձու ալիքները պիտի ճգնին մեր բարեգործութեան նաւը խորտակել . ձմեռ ժամանակ կ'ըսեմ, վասն զի մեր ազգը սակաւին լուսաւորութեան ձմեռուան մէջ է եւ անշուշտ իւր փոթորիկներով պիտի հարուածէ զմեզ . սակայն մի՛ վախնաք, ձմեռուան կը յաջորդէ զարուն եւ մեր ըստ մեծի մասին տգէտ ժողովուրդը մեր գործոց բարի ըլլալը տեսնելով, փոխանակ շանթի, ծաղիկ կ'թօթափէ մեր գլխուն : Բայց չի վճատիմք . նաւապետ մի երբ փոթորիկի տեսն ճանաչայ կ'ենէ, զիտէ որ մեծ արգելքներ պիտի պատահին իրեն եւ անոնց զիմազրելու կը պատրաստուի նախապէս . մեք ալ որ այս բարեգործ ընկերութեան նաւապետներն եմք, պատրաստուիմք մեր գէժ երած խոժոռ ա-

լեաց դէժ գնելու : Թո՛ղ բամբասեն, գրպարտեն զմեզ, որչափ որ կ'ուզեն . մեք վստահ եմք որ մեր գործը բարի է . մեք մեր հայրենիքը փրկելու պատրաստուող դիւցազնուհիներ եմք . չարամտութեան եւ տգիտութեան նետերը պէտք է որ արհամարհեմք : Այսպիսի գործ մի, որ տակաւին նոր կտեսնուի մեր ազգին մէջ, ի հարկէ շատ քշնամիներ, ծաղրողներ կ'ունենայ . մեր պատասխանը միշտ սա պիտի ըլլայ . «Չանք եւ յարատեւութիւն ամեն բանի կյաղթեն» : Շատեր կ'ըսեն եւ պիտի ըսեն թէ չէք կրնար յաջողիլ, սակայն ո՛ր մեծ գործ առաջին փորձով յաջողած է . եթէ մեք չյաջողիմք՝ գէթ հիմը դրած կ'ըլլամք եւ ուրիշ մի կը կատարելագործէ զայն . տեսէ՛ք չոգեկառքին կատարելագործութիւնը քանի անձանց կը վերաբերի . Բարէն չոգեշարժ մեքենայով նաւեր շարժելու գաղափարը կը յղանայ, Ռոթ գայնի գործ կը զնէ, Պօլթն կը կատարելագործէ, Թրիվիլիթ անով կառքեր քաշելու գաղափարը կը զնէ, Պօլթն կը կատարելագործէ, Սթիֆինսն ի գործ կ'ընէ եւ կատարելագործեալ վիճակի մէջ մարդկութեան կնուիրէ չոգեկառքը : Ըսել է մեծ գործ մի ընելու համար ժամանակի պէտք կայ . մեք աշխատի՛մք այս ընկերութիւնը յառաջ տանելու եւ ապագայ սերունդը թող կատարելագործէ զայն, թերեւս չեմք յաջողիրի երկիւղը թո՛ղ չվճատեցնէ զմեզ : Արդէն սկսած են շատերը ծաղրել զմեզ ըսելով թէ «օրակարգ ալ ունին եդեր», եւն, բայց մեք եթէ վախնամք ծաղրաբանութենէ, բամբասանիէ, եթէ կարեւորութիւն տամք ժողովրդեան մէջ պտտած սին խօսքերուն, բան մը չեմք կրնար ընել, եւ մեզի պէս բոլոր ազգին բարեբարները այսպէս շարախօսութենէ վախնալով ետ քաշուէին, մեք այսօր ոչ գպրոց կ'ունենայինք, ո՛չ եկեղեցի, ո՛չ Ընկերութիւն եւ ոչինչ . բայց տեսէք, Նաւրանդեան մի իւր ազգին ծառայելու համար կը աքնի, կ'աշխատի եւ աքորանաց մէջ կ'մեռնի գոչելով :

Ազատութիւն գոչեցի, թո՛ղ որոտայ իմ գլխին փայլակ՝ կայծակ, հուր երկաթ, թող դաւ զնէ թշնամին : Ես մի՛նչ ի մահ կախաղան, մի՛նչեւ անարդ մահու սիւն, Պիտի գոռամ, պիտի գոչեմ անդադար «Ազատութիւն» :

* padfrās = pādāfrās = pādāfrāh = pādfrāh մեր «պատուհաս»ին, ինչպէս pādāsh ն ալ կազմօրէն մեր «պատիժ»ին կը պատասխանեն, բայց պի մէջ ստորագրար առաջինը պատիժ եւ երկրորդը վարձք նշանակութեամբ կ'աւանդուի (տես Կարնամակ, ծան. 29) : ⁵² Բուն (bun) արմատէն = խորարմատ, հաստատուն : ⁵³ hamimāli ⁵⁴ Այս avirtar ք (bartar) ճիշդ մեր «ի վեր քան»ն ⁵⁵ Այս karp ք որ միանգամայն kerp եւ kalp է (kālībūd = տճ. բալըպ) = կաղապար = գաղափար, կարծեմ թէ մեր «կերպ»ն ալ է որ ուրիշ հաւանական ծագում չցուցներ . եւ «կերպ արանք»ն ալ արդէն ճիշտ այն իմաստով է չ.ի մէջ : ⁵⁶ Stam-ak = Ստամ(ք)ակ = satamkār :

Ի՛նչ վսեմ խօսք. տեսէք օրօրոցէն մին-
չեւ գերեզման :ազատութիւն կգոչէ եւ
կմեռնի. մեք ալ անոր հետեւելով՝ մինչեւ
վերջին շունչերնիս գոչեմք. «Փրկութիւն
Հայաստանի» եւ գիտցէ՛ք որ Հայաստան
պիտի փրկուի: Իզական սեռը եթէ ուզէ,
կրնայ հրաշքներ գործել եւ ասոր փորձը ա-
մեն ուրեք տեսնուած է: Մեք այս Բնկերու-
թիւնը կազմած օրերնիս 12 հայուհի էինք.
բայց այսօր ուրախութենէս չեմ կրնար համ-
րել ազգասէր տիկնանց թիւը: Այս Բնկերու-
թիւնը դեռ նոր է, եւ բաժանորդներէ ի գատ
100էն աւելի անդամ ունի. եթէ ամենքնիս
միատեղ աշխատիմք, քիչ ժամանակէն բո-
լոր Հայ իզական սեռը մէջը պիտի պարփա-
կեմք: Կը յիշէ՞ք, քոյրերս, երբ սոյն Բնկե-
րութիւնը կազմելու համար առաջին անգամ
հրաւիրեցի զՁեզ, ծիծաղելով իրարու երես
կը նայէիք թէ մե՞ք պիտի փրկեմք Հայաս-
տանը. բայց տեսէ՛ք որչափ ազգասէր ձեռքեր
միացան մեզ, տեսէ՛ք Աստուած որչափ
կ'օգնէ բարի ձեռնարկութեանց: Բայց քայլ
մը պէտք է ընկրկիմք մեր նպատակէն.
միշտ յառա՛ջ, միշտ ի լո՛յս, միշտ ի վե՛ր.
Եթէ լաւ մտածեմք, կը հասկնամք թէ մեր
Բնկերութիւնը շատ բարձր է ուրիշներէ.
Վասն զի նոր է, վասն զի առաջինն է մեր սե-
ռին համար. ջանամք որ ինքզինքնիս այս
բարձր դիրքին մէջ պահեմք, աշխատիմք
միահաղոյն, ձեռք ձեռքի տանք, գրկեմք զի-
րար սերտ սիրով եւ ամենէն աւելի երդում
ընեմք հոս որ երբեք անմիաբանութեան, ա-
տելութեան, անձնասիրութեան ոգի չկրեմք,
երդմո՛ւմք որ վանեմք մեր մէջէն նախանձու
գգացումք, երդմո՛ւմք աշխատիլ ցշունչ յե-
տին, երդմո՛ւմք ամեն ջանք ի գործ դնել մեր
հայրենիքը փրկելու եւ երկիրն լսելով մեր
ուխտը, օրհնէ՛ մեր նպատակը եւ պսակէ
մեր իզօր 5:

«Ազգանուէր Հայուհեաց Բնկերութեան»
առաջին Կանոնագիրը կազմուած է 17 կէ-
տերէ եւ հրատարակուած արդէն 1879 Մայի-
սին Փունջի⁶ եւ Թէրն. Էֆէնարի⁷ մէջ:
Աւելորդ չենք համարել զայն ներկայացնել
հոս գոնէ մասամբ.

1. Ազգանուէր Բնկերութեանս նպատակն
⁵ Փունջ, 1879, թ. 1373:
⁶ Անդ:
⁷ 1879, թ. 567:

է Հայագրի իգական սեռի դաստիարակու-
թեան օգնել:

2. Բնկերութիւնս ունի երկու ժողով,
մին Ընդհանուր եւ միւսն Գործադիր:

3. Ընդհանուր ժողովը, որ կը բաղկա-
նայ ամեն ընկերուհիներէ, երեք ամիսն մի
անգամ կը գումարի որոշեալ տեղ մը եւ կը
լսէ Գործադիր ժողովոյ պաշտօնավարու-
թեան եռամսեայ տեղեկագիրը. կը քննէ եւ
կը հաստատէ հասոյթներն ու ծախքերը եւ
Բնկերութեան նպատակին հասնելու միջոց-
ները կը տնօրինէ եւ կը յանձնարարէ Գոր-
ծադիր ժողովոյ զանոնք ի գործ դնել:

6. Ընդհ. ժողովոյ Դիւանը կը բաղկա-
նայ երեք ատենապետէ եւ երեք ատենադպրէ,
որք մէկ տարուան համար կ'ընտրուին եւ
վերընտրելի են:

9. Գործադիր ժողովը կը բաղկանայ մէկ
ատենապետէ, երկու ատենադպրէ, երկու
զանձապետէ եւ երկու համարակալէ, որք
սոյն պաշտօններով կ'ընտրուին Ընդ. ժողո-
վէն:

10. Ամեն Բնկերուհի պարտական է գէթ
մի ամսական բաժնեգին վճարել:

11. Ամսական բաժնեգինն է մէկ դահե-
կան արծաթ:

12. Ով ոք եթէ կամի բաժանորդ կրնայ
ընդունուիլ, ամսական գէթ մէկ բաժնեգին
վճարելու պայմանաւ. բաժանորդք իրաւունք
չունին Բնկերութեան գործոց միջամտել,
այլ նորա տարեկան գործոց տեղեկագիրը կը
ստանան⁸:

Բնկերութիւնը 1880ին կը հրատարակէ
իր «Հիմնական Կանոնագիր»ը, կազմուած
24 Յօդուածներէ եւ «Ներքին Կանոնագիր»ը՝
32 Յօդուածներէ⁹:

Բնկերութեան առաջին վարչական կազմը
հետեւեալն է. Ատենապետ Եղիսաբէք Սեդ-
րոսեան, Ատենադպր՝ Զապէլ Խաննեան¹⁰:

Բնկերութիւնը ուղերձով մը Ս. Պատ-
րիարքին օրհնութիւնը խնդրած ըլլալով՝
Ներսէս Արք. վարժապետեան հետեւեալ
պատասխանը գրած է.

Առ Նորարողը Բնկերութիւն
Ազգանուէր Հայուհեաց

⁸ Փունջ, անդ, թ. 1373:
⁹ Տես Ա. Տեղեկագիր, Կ. Պ. 1880, էջ 7—10 եւ
11—13:
¹⁰ Փունջ, 1879, թ. 1379:

Զձեր շնորհալի դիր ընկալեալ ուրախ
եղէ յոյժ ընդ միարանութիւնդ ի դրախտ Հայ-
րենեաց վասն բարգաւաճման դաստիարա-
կութեան ի համատիս եւ համարինս Ձեր
դասերս Հայաստանի: Իցի՛ւ թէ օրինակք
Ձեր զհետ Ձեր ձգէին զամենեսին զՏիկնայս
եւ զՕրիորդս ազգիս եւ վաստակ կարեւոր
եւ դաշտ քրտանաց եւ ասպարէս առաքինու-
թեան իրրեւ զՁեզ ընտրէին եւ նոքա զԲնկե-
րութիւն Հայկազն մանկաւոյն:

Մաղթեմ ի Տեառնէ օգնական լինել Ձեզ
եւ քաջալեր, զՀռիփսիմեանց սրբուհեաց
շնորհել Ձեզ թիւրաբեղուն արգասիս, օրհ-
նել զքրտունս Ձեր եւ Դուք ամենեքեան զօ-
րացեալ Տերամբ եւ Հոգի շնորհաց ընդ Ձեզ
փայլեսլիք իրրեւ զաստեղան, եղի՛ջիք իրրեւ
ծաղիկ անթառամ մեր Հայրենեաց, զդրախտ
նախնեաց Ձերոց գեղաղէջ զարդարելով ի
միսթարութիւն Հայոց եւ իմ:

1879 Մայիս 30 Աղօթարար Ձեր
Պէյքօզ Ն. Ե.¹¹

Բնկերութիւնը երկու գրասենեակ ունե-
ցած է. 1. Սկիւտար՝ Սելամիէ Գարաղօլի
դիմացը, Թիւ 321 տունը եւ 2. Ղալաթիա,
Դպրոցասիրաց — Արեւելեանի սենեակը,
Նորատունկեան Խան՝ Թիւ 11¹²: Իսկ Ընդհ.
ժողովի հաւաքավայրն եղած է՝ Սելամիէ
փողոց, Գիւրգճիպաշի տունը¹³:

Գատրգիւղի «Տիկնանց եւ Օրիորդաց
Բնկերութիւն»ը հազիւ լսած «Ազգանուէր
Հայուհեաց Բնկերութեան» հիմնուած՝ դե-
մում կ'ընէ, փափազ յայտնելով միութեան:
Ընդհանուր ժողովի մը մէջ երկակողմանի
համաձայնութեամբ միութիւնը տեղի կ'ունե-
նայ, հետեւեալ պայմաններով.

1. Ազգանուէր Հայուհեաց Բնկերու-
թիւնը արական սեռին մէջ կազմուած Բնկե-
րութեանց ամէնէն լաւ գործողներուն ձե-
ռամբ պիտի բանայ իւր վարժարանները,
ուսմանց ծրագիրներն ու դպրոցին Կանոնա-
գիրն ինքը պատրաստելու պայմանաւ:

2. Բնկերութիւնը իւր առաջին վարժա-
րանն պիտի հաստատէ Հայաստանի մէջ, երբ
զայն յառաջ վարելու կարող վիճակի մէջ

¹¹ Տես Փունջ, 1879, թ. 1379 թէ՛ ուղերձը եւ
թէ՛ պատասխանը: — Հմմտ. Մասիս, 1879, թ. 2341:
¹² Մասիս, 1879, թ. 1349:
¹³ Անդ, թ. 1356:

գտնուի, այն է՝ դպրոցին յատկացեալ գու-
մարին եռապատիկն ունենայ:

3. Բնկերութիւնը երբ բաւական գումար
մը ունենայ ի ձեռին, շահու պիտի դնէ զայն
սեղանաւորի մը քով կամ պանքա մը:

4. Գատրգիւղի Բնկերութիւնն, որ այսու-
հետեւ Հայուհեաց Ազգանուէր Բնկերութեան
նիւղը կը կազմէ, պարտի երեք ամիսն մի
անգամ իւր հաշիւները ներկայել Ընդհ. Ժո-
ղովոյս... այսուհետեւ վերոյիշեալ երկու
Բնկերութիւնք մի են եւ Հայուհեաց Ազգա-
նուէր Բնկերութիւն անունը կը կրեն¹⁴:

Արդէն 1879 Յունիսի սկիզբը Բնկերու-
թիւնը Պոլսոյ շատ մը թաղերու մէջ նիւղեր
հաստատած էր եւ հեռաւոր տեղեր ալ դի-
մում ըրած էր նոյն նպատակով¹⁵:

Բնկերութեան Գործ. ժողովը նամակով
մը տեղեկացուցած ըլլալով Բնկերութեան
հիմնուած եւ ծրագիրը՝ Գէորգ Դ. Սրբազան
Կաթողիկոսը 1879 Հոկտ. 23ին օրհնութեան
Կոնդակ մը կը դրկէ, զոր կը հրատարակեն
թերթերը¹⁶:

1879ի աշնան, Օր. Էլպիս կեսաբացեան,
առաջին հայ խմբագրուհին, լոյս կը հանէ
«Նամականի առ ընթերթասէր հայուհիս» ա-
նունով գիրք մը, որուն հասոյթը կը յատ-
կացնէ «Ազգանուէր Հայուհեաց»ին, որուն
ինքն ալ անգամ էր հաւանօրէն¹⁷:

1879 Յունիսին — Բնկերութեան հիմ-
նումէն տակաւին երկու ամիս վերջ — Բնկե-
րութեան գրուած բաժնիներու թիւը հասած
էր 1500ի¹⁸:

«Ազգանուէր Հայուհեաց»ի առաջին բա-
րեբարը կ'ըլլայ Տիկ. Զարգարեան, որ Ըն-
կերութեան բաժնետոմսերը իր դրամով
տպագրել կու տայ¹⁹:

Երախտագիտութեամբ կը յիշուի Տիկ.
Սրբուհի Երիցեանց, հիմնադիրը Թիֆլիսի
«Հայուհեաց Բարեգործական Բնկերութեան»,
որ իր Բնկերութեան առաջին հասոյթէն
նպաստ մը կը հասցնէ «Ազգ. Հայու-
հեաց»ին²⁰:

¹⁴ Մասիս, 1879, թ. 2368:
¹⁵ Անդ, թ. 2360:
¹⁶ Անդ, թ. 2492:
¹⁷ Անդ, թ. 2499—2500:
¹⁸ Փունջ, 1879, թ. 1385:
¹⁹ Անդ, թ. 1371:
²⁰ Ա. Տեղեկագիր, Կ. Պ. 1880, էջ 4:

Առաջին նուիրատուներէն մին է նաեւ «Պէրպէրեան Սանուց Ընկերութիւն»ը²¹ :

Ընկերութեան Ա. տարւոյ անդամներու եւ նուիրատուներու ցանկը կը տեսնուի Ա. Տեղեկագրին մէջ (էջ 14—28) : Հոն կը գտնենք նաեւ Ընկերութեան միամեայ Մուտքը՝ 138,496,50 եւ Ելքը՝ 39,818,50 դահեկան :

Ընկերութեան Ա. տարեշրջանի Վարչապետը հետեւեալն է .

Դիւան Ընդհ. Ժողովի

| | |
|--------------------|--------------|
| Եղիսարեթ Սեղրոսեան | Ա. Ատենապետ |
| Տիրուհի Մամիկոնեան | Բ. " |
| Փուլիկ Ոսկան | Գ. " |
| Զապէլ Խանճեան | Ա. Ատենադպիր |
| Նեկտար Թաշճեան | Բ. " |
| Մաննիկ Զպուքճեան | Գ. " |

Կենդրոնական Գործ. Ժողով

| | |
|--------------------|---------------------------|
| Սրբուհի Ալեանաքեան | Ատենապետ |
| Զէրաֆէթ Խանճեան | Դեր-Ատենապետ |
| Տիրուհի Գալֆայեան | Ատենադպիր |
| Էլզաբէթ Գոռան | Դեր-Ատենադպիր |
| Երանուհի Զաքարեան | Գանձապետ |
| Նուրիկ Կիւմրիչեան | Դեր-Գանձապետ |
| Սաթենիկ Հաճեան | Համարակալ ²² : |

Ընկերութիւնը պարահանդէս մը կու տայ 1880 Մարտին, հովանաւորութեամբ Սուլթանին, հասոյթի կէսը յատկացնելով Վանի, Պայպլիտի եւ Վաղարշապետի սովեակներուն²³ :

Ընկերութեան Բ. տարւոյ Վարչութիւնը, ընտրուած Ղարաթիոյ Խորհրդարանի մէջ 1880 Յունիս 2ին, կազմուած էր հետեւեալ անձերէ .

Դիւան Ընդհ. Ժողովի

| | |
|--------------------------|--------------|
| Տիկ. Ազաւնի Ապրօ | Ա. Ատենապետ |
| Տիկ. Մաքրուհի Մէրասեկեան | Բ. Ատենապետ |
| Օր. Երմոնէ Զարադեան | Գ. Ատենապետ |
| Օր. Զապէլ Խանճեան | Ա. Ատենադպիր |

(միաձայնութեամբ ընտրուած՝ բայց հրաժարած է)

| | |
|------------------------|--------------|
| Օր. Ակիւլինէ Լուսինեան | Ա. Ատենադպիր |
| Օր. Սաթենիկ Հարենց | Բ. Ատենադպիր |
| Օր. Պիտոս Շարապաշեան | Գ. Ատենադպիր |

²¹ Անդ .
²² Անդ, էջ 15:
²³ Մախ, 1880, Թ. 2534, 2572, 2584:

Կենդ. Գործ. Ժողով

| | |
|------------------------|-------------------------|
| Տիկ. Մարիամ Պիլորեան | Ա. Ատենապետ |
| Տիկ. Նեկտար Թաշճեան | Բ. Ատենապետ |
| Օր. Բրիտանիկ Արթինօֆ | Ա. Ատենադպիր |
| Օր. Մաննիկ Սեղրոսեան | Բ. Ատենադպիր |
| Օր. Երանուհի Զաքարեան | Ա. Գանձապետ |
| Օր. Մարիամ Անտոնեան | Բ. Գանձապետ |
| Օր. Նոյեմի Խոչեկիւլեան | Համարակալ ²⁴ |

Բ. տարեշրջանին Ընկերութեան Մուտքն է 193,989,50, Ելքը 26,266,75²⁵ : Իսկ Գ. տարեշրջանի Մուտքն է 208,692,50²⁶ :

«Ազգանուէր Հայուհեաց Ընկերութիւն»ը ամէն պատրաստութիւն տեսնելէ յետոյ՝ 1880 Դեկտ. 1ին Քիլիի Գասապա Գիւղաքաղաքին մէջ կը բանայ իւր առաջին աղջկանց վարժարանը՝ «Միացեալ Ընկերութիւնի Հայր»ի միջոցաւ :

Վարժարանը չորս տարուան ընթացք մը կ'ունենայ. երկու պատրաստողական կարգերով : Բացումի առեւ վարժարանը կ'ունենայ 99 աշակերտուհի եւ 1884ին կու տայ 2 շրջանաւարտուհի²⁷ :

Ընկերութեան Երկրորդ վարժարանը կը բացուի Հանքնի մէջ 1881 Մայիս 23ին, ունենալով 71 աշակերտուհի եւ 3 նախապատրաստական կարգերու 3 բարձրագոյն դասեր²⁸ :

1883 Նոյ. 16ին Ընկերութիւնը կը յաջողի իր երրորդ վարժարանը բանալ Մուշի մէջ, 81 աշակերտուհիով եւ նախապատրաստական 1 եւ բարձրագոյն 3 դասարանով²⁹ :

Մասնաւոր դիմումի եւ խնդրանքի մը վրայ՝ Ընկերութիւնը 1884 Նոյ. 1էն սկսած յանձնառու կ'ըլլայ օժանդակել Երզնկայի Քրիստիանեան աղջկանց վարժարանին, ուր կային 163 աշակերտուհիներ՝ 1 նախապատրաստական եւ 5 կարգերով³⁰ :

1880ին Վիեննայի Հայ Գաղութը կը գրէ Ընկերութեան թէ ինքը յանձն կ'առնէ Ընկերութեան կողմէ բացուելիք վարժարաններու

²⁴ Անդ, Թ. 2637: — Բ. Տեղեկագիր, Կ. Պ. 1881, էջ 16:
²⁵ Բ. Տեղեկագիր, էջ 17:
²⁶ Գ. Տեղեկագիր, էջ 53:
²⁷ Մախ, 1880, Թ. 2730, 1881, Թ. 2793: — Գ. Տեղեկագիր, Կ. Պ. 1885, էջ 18:
²⁸ Գ. Տեղեկագիր, էջ 19: — Տե'ս Երկամեայ Տեղեկագիր, Կ. Պ. 1911, էջ 4 Հաճոյն քաղաքի եւ էջ 18 աղջկանց վարժարանի Լուսանկարները:
²⁹ Գ. Տեղեկագիր, էջ 14: — Գ. Տեղեկագիր, էջ 20: — Թերթ. Էֆ. 1883, Թ. 1633:
³⁰ Գ. Տեղեկագիր, էջ 20—21:

գրեմական պիտոյքները հոգալ եւ ընել դրամական նպաստներ³¹ :

1881ի սկիզբը Ընկերութիւնը Լսարան մը կը բանայ Սելամիէի «Կրթասիրաց Ընկերութեան» Ընթերցատան մէջ³² :

«Ազգանուէր Հայուհեաց Ընկերութիւն»ը Պոլսէն դուրս ալ կ'ունենայ իր մասնաճիւղերը. 1880ին Կարին³³, 1881ին Երզնկա³⁴, 1882—1883ին Ռուսուք եւ Իզմիր³⁵, 1884ին Պրուսա³⁶, Ազրիանապոլիս³⁷, 1890ին Ռոտտթո³⁸, 1913ին Ատաիազար³⁹, եւ այլն :

Յովհաննէս Այվազովսկիի գումար մը կը յատկացնէ Ընկերութեան, որուն տոկոսը՝ 100 Փր. կը խոստանայ զրկել տարուէ տարի⁴⁰ :

Ընկերութիւնը 1882ին կը ձեռնարկէ մեծ վիճակահանութեան մը : Այս առթիւ ամէն կողմէ կը տեղան պէսպէս եւ բազմաթիւ նուէրներ, ոչ լոկ սովորական եւ փոքր արժէք ներկայացնող առարկաներ, ինչպէս՝ պայուսակ, մետաքսէ թաշկինակ, գրքեր, այլ եւ թանկագին իրեր, օրինակ՝ ոսկի զինդեր, գորգեր, ասեղնագործ մեծ պատկերներ եւ ասոնք մեծ թուով, ինչպէս կը ցուցնէ հսկայ շարանը նուէրներու եւ նուիրատուներու⁴¹ :

1884ին Ընկերութիւնը իւր Հիմնական Կանոնի 21. Յօդուածի հիման վրայ կ'ընդարձակէ իր գործունէութիւնը եւ նպաստը գաւառաց մէջ գտնուած եւ բացուելիք հայ աղջկանց վարժարաններու համար : Ընկերութիւնը այս առթիւ կը գծէ 7 մասնաւոր կէտեր՝ իր նպաստի եւ օժանդակութեան կերպերու եւ չափի մասին⁴² :

Տիկ. Նեկտար Զուր, որ տարիներով վարած է Ընկերութեան Ատենապետի պաշտօնը եւ մեծ արգիւնք ունի Ընկերութեան յառաջընթացին մէջ՝ 1887ին կը ստանայ երրորդ կարգի Շէֆաքթի պատուանշանը⁴³ :

³¹ Փուլք, 1880, Թ. 1466:
³² Մախ, 1881, Թ. 2803: — Թերթ. Էֆ. Բար, 1881, Թ. 1021:
³³ Փուլք, 1880, Թ. 1493:
³⁴ Մախ, 1881, Թ. 2835:
³⁵ Փուլք, 1883, Թ. 1834:
³⁶ Անդ, 1884, Թ. 1891:
³⁷ Հայրենիք, 1884, Թ. 1691:
³⁸ Արեւիկ, 1890, Թ. 2303:
³⁹ Ժամանակ, 1913, Թ. 29:
⁴⁰ Գ. Տեղեկագիր, էջ 5:
⁴¹ Տե'ս Թերթ. Էֆ. Բար, 1882, Թ. 1378:
⁴² Փուլք, 1884, Թ. 1887:
⁴³ Մախ, Կ. Պ. 1887, էջ 561:

Ընկերութեան չորրորդ աղջկանց վարժարանը կը բացուի Ադերդի մէջ, 1885ին⁴⁴ : Ասկէ թէչ ետքը բացուած է հինգերորդ վարժարանը Զարանճազի Բերրի Գիւղաքաղաքին մէջ⁴⁵ :

Ընկերութեան այս վարժարաններու շնորհաւարտուհիները յետոյ պաշտօնավարած են շրջակայ աւաններու դպրոցներու եւ Ընկերութեան բացած վարժարաններու մէջ⁴⁶ :

«Ազգանուէր Հայուհեաց Ընկերութիւն»ը իր այս մեղուածան աշխատանքները շարունակած է յօգուտ կրթութեան եւ մտքի զարգացումի հայ իգական սեռին, ծրագիր եւ նպատակ ունենալով վարժարաններ բանալ «Հայաստանի եւ Կիլիկիոյ ամէնէն յետին անկիւններն իսկ»⁴⁷ :

Վրայ կը հասնին սակայն արհաւիրքի օրերը. Կարգիլուի հանգամանակները, կը փակուին դպրոցները... Ընկերութիւնը 1893ին իր վարժարաններու վերջին ծախքերը վճարելէ վերջ՝ ունեցած 120 ոսկին կը տանի Պատրիարքարան ու արցունքոտ աչքերով պահ կը դնէ՝ լաւագոյն օրերու ակնկալուոյց :

15 տաժանելի, անգործութեան տարիներ անցնելէ վերջ՝ 1908 Սեպտեմբեր 4ին Ընկերութիւնը կը վերակազմուի Բերայի Արուեստանոցին մէջ : Որքան մեծ էր Ընկերութեան անդամուհիներու խանդավառութիւնը՝ նոյնքան խրախուսիչ կ'ըլլայ Հայութեան համատարած համակրանքը Ընկերութեան զաղափարականին ու գործունէութեան աշխոյժին հանդէպ : Մինչ մէկ կողմէ նոր Մասնաճիւղեր կը կազմուին Պոլիս, Հայաստան եւ արտասահման, միւս կողմէ նուիրատուութիւնները կը կրկնապատկուին : Ու Ընկերութիւնը քաջալերուած այդ ընդհանուր ցոյցերէն՝ կը նետուի ասպարէզ, լծուելով ազգանուէր աշխատանքի :

Այս անգամ կը նախընտրէ ինքն իր ձեռքով, անկախաբար, գործել : Ժամանակներն ու պարագաները փոխուած եւ Ընկերութիւնը ինքն ալ փորձառու եղած էր : Ամենուրեք

⁴⁴ Գ. Տեղեկագիր, էջ 7—8. Երկամեայ Տեղ. 1911, էջ 5:
⁴⁵ Երկամեայ Տեղեկագիր, 1911, էջ 5:
⁴⁶ Անդ, էջ 5:
⁴⁷ Անդ :

վստահելի ներկայացուցիչներ կ'անուանէ, որոնց միջոցաւ կը սկսի գործել:

Առաջին տարին արդէն — 1908—1909 — կը բացուին աղջկանց վարժարաններ Մուշ, Զէյթուն եւ Հանքնի: Իբրեւ Տեսչուհի՝ Մուշ կը ղրկուի Օր. Իսկուհի Զիթնեան. Զէյթունի Տեսչուհի կ'ընտրուի Օր. Զարուհի Փէշտիմալնեան. Հանքնի Տեսչուհիներ կը վարէ առժամայէս Ներսէս վ. Դանիէլեան⁴⁸:

Ընկերութեան գործունէութիւնը հազիւ նոր թափ ստացած՝ վրայ կը հասնի Կիլիկիան աղէտը՝ Ատանայի ջարդով սկիզբ առած: Բոլոր Կիլիկիան Որբանոցներու աղջկանց կրթութեան հոգը կը ստանձնէ Ընկերութիւնը: Իր խնամքին ներքեւ կ'անէ Մարաշի, Տէօրդ-Եօլի, Այնթապի, Հասան-Պէյլիի, Հանքնի Որբանոցներու վարժարանները՝ անոնց գիրք, գրենական, ձեռագործի նիւթ ղրկելով, ներկայացուցիչներ ու տեսչուհիներ նշանակելով:

Առանձին ուշադրութեան առակայ կ'ըլլայ աւերակ դարձած Ատանան, ուր կը ղրկուի Տիկիմ Արշակունի Թէոդիկ, որ մէկ-մէկ կը հաւաքէ ղժրախտ որրուհիները, կը համախմբէ յարկի մը տակ, կը սրտապնդէ զանոնք, կ'ընտրէ ուսուցչուհիներ, կը հսկէ ամէն կարգադրութեանց եւ ա'յն ատեն կը մեկնի անկէ, երբ արժանաւոր անձեր կը փոխանորդեն զինքը:

Ատանայի Որբանոցին սատարած են նիւթապէս Պոլսոյ Մաքրիգիւղի «Կիլիկիան Որբախնամ Կանանց Ընկերութիւնը»՝ ստանձնելով տարրական նախակրթարանի ծախքը, ինչպէս նաեւ Մելիքնեան Եղբարց գործատան նպաստից անտուկը: Այս նպաստներով Ընկերութիւնը Ատանայի մէջ կը բանայ դպրոց մը՝ ողբացեալ Յակոբ Պապիկեանի յիշատակին նուիրուած⁴⁹:

Ընկերութեան բոլոր Որբանոց-դպրոցներու սանուհիներու խմբանկարները հրատարակուած են Ընկերութեան «Երկամեայ Տեղեկագրին» մէջ (1911 Կ. Պոլիս):

Հոս մասնաւորապէս կ'ուզենք յիշատակել «Ազգանուէր Հայուհեաց»ի նպաստող Ընկերութիւն մը — Օրիորդաց Միութիւն — կազմուած 1908ի վերջերը Բերայի մէջ (տե՛ս անդ՝ Թ. 50), նախաձեռնութեամբ Օր. Մարինո Ստամպոլուեանի եւ Օր. Ատրիսէ Տօ-

⁴⁸ Երկամեայ Տեղեկագիր, 1911, էջ 10—11:
⁴⁹ Երկամեայ Տեղեկ., էջ 11:

նիլեանի, որոնք իրենց անձնական ուժերով ցերեկոյթ մը կազմակերպած՝ շօշափելի գումար մը կը գոյացնեն եւ Ընկերութեան կը յանձնեն, մեծապէս նպաստելով Ընկերութեան՝ նեղ պարագային⁵⁰:

1908—1910ի շրջանի Ընկերութեան վարչական Մարմինները կը ներկայացնեն, Ընդհ. Ժողովի 33 անդամներէն զատ (Երկամեայ Տեղեկ., էջ 299), հետեւեալները.

| | |
|----------------------------------|----------------------------|
| Ընդհ. Ժողովի Դիւան | |
| Մաքրուհի Նորատունկեան | Ատենապետ |
| Սեղարին Տօքթ. Շահպազ | Դեր-Ատենապետ |
| Արշակուհի Թէոդիկ Աշխէն Գաբմաճեան | Ատենադպիր |
| | Դեր-Ատենադպիր |
| Գործադիր Ժողով | |
| Զապէլ Ասատուր Բերկուհի Փափազեան | Ատենապետ |
| Հերիգա Շալճեան | Դեր-Ատենապետ |
| Զապէլ Համբիկեան | Ատենադպիր |
| Վերժին Սթամպուլուեան | Դեր-Ատենադպիր |
| Լուիզ Ղազարոսեան | Գանձապետ |
| Փարիս Տօքթ. Աճէմեան | Համարակալ |
| Սուլթան Եոսուֆեան | Խորհրդական |
| Մարի Միւսէնտիսեան | Խորհրդական |
| | Խորհրդական ⁵¹ : |

Ընկերութեան կարեւոր ձեռնարկներէն մին կ'ըլլայ Վարժուհիներ խնդիրը — վարժարան մը հիմնել, որ վարժուհիներ պատրաստէ Ընկերութեան վարժարաններու համար: Նախ կը խորհուի Տարսուսի մէջ բանալ զայն: Յետոյ, աւելի կենդրոն տեղ մը նկատի առնուելով, կ'որոշուի զայն Կարնոյ մէջ բանալ:

Սուլթանի հովանաւորութեամբ մեծ պարահանդէսի մը միջոցաւ հարկ եղած նիւթականը ապահովելէ յետոյ՝ կը ղիմուի Կարնոյ Սանասարեանի խնամակալութեան, որ յանձն կ'անէ արտօնել իր ուսուցիչներուն՝ դասախօսելու բացուելիք վարժուհիներին մէջ: Վարժուհիները կը բացուի 1910ին Կարնոյ Հոփսիմեանց վարժարանի շէնքին մէջ, որուն մէկ յարկը կը տրամադրուի Ընկերութեան: Աշակերտութիւնը կը կազմեն Հոփսի-

⁵⁰ Տե՛ս Միութեան վարչական կազմը եւ անդամներու անունները, Երկամեայ Տեղեկագիր, անդ, էջ 13:
⁵¹ Երկամեայ Տեղեկ., էջ 29:

սիմեանցի շրջանաւարտուհիներէն եւ շրջակայ գիւղերէն 30 օրիորդներ՝ ապագային Ընկերութեան վարժարաններու մէջ պաշտօնավարելու պայմանաւ, իսկ ուսուցչական մարմինը կը կազմուի Գէորգ Աբուլեանի Տեսչութեան տակ 8 ուսուցիչով եւ 4 ուսուցչուհիներով⁵²:

Ատանայի Թաղ. Խորհուրդը գնահատելով Ընկերութեան վարժարանի մէկ տարուան անակնկալ արգիւնքը՝ իր աղջկանց վարժարանը կը յանձնէ Ընկերութեան՝ հինգ տարուան պայմանագրով մը:

1908ի Ընկերութեան վերակազմութենէն մինչեւ 1910ի աշունը Ընկերութիւնը բացած է հետեւեալ վայրերու մէջ աղջկանց վարժարաններ. Մուշ (նախակրթարան եւ բարձրագոյն), Սասուն (Շէնք Գիւղ), Պուլաւնք (Կոփ Գիւղ), Կարնոյ Դաշտ (Օճնի Գիւղ եւ Զիթնոյ Գիւղ), Հազո, Կարին Բաղաֆ (վարժուհիներ), Ատանա (նախակրթարան եւ բարձրագոյն), Զէյթուն (նախակրթարան եւ բարձրագոյն), Հանքնի (տարրական եւ բարձրագոյն), Տարսուս, Մարաշ, Տէօրդ-Եօլ, Հասան-Պէյլի, Այնթապ, Ալախստան, Եփեսոս, Թալաս: Գումար՝ 23 վարժարան⁵³:

1910 Հոկտ. 23ի Ընդհ. Ժողովը կ'ընտրէ յաջորդ նոր վարչութիւնները.

| | |
|---------------------------|---------------|
| Դիւան Ընդհ. Ժողովոյ | |
| Տիկ. Սեղարին Տօքթ. Շահպազ | Ատենապետ |
| Տիկ. Արուսեակ Հարենց | Դեր-Ատենապետ |
| Օր. Ատրիսէ Տօնէլեան | Ատենադպիր |
| Օր. Արաքսի Գալբաբեան | Դեր-Ատենադպիր |
| Գործադիր Ժողով | |
| Տիկ. Զարուհի Գալբաբեան | Ատենապետ |
| Տիկ. Արշակուհի Թէոդիկ | Դեր-Ատենապետ |
| Տիկ. Հայկանոյ Մարգարիտ | Ատենադպիր |
| Տիկ. Էօթէնի Տ. Ազարեան | Դեր-Ատենադպիր |

⁵² Անդ, էջ 19:
⁵³ Տես Երկամեայ Տեղեկ., էջ 33—37, ուր տրուած են նաեւ ուսման նիւթերը: — Կարնոյ Օճնի Գիւղի աղջկանց վարժարանի դրան վրայ թիթեղէ տախտակ մը կը տեսնուէր, շրջանակով, որուն վրայ գրուած էր. «Ազգանուէր Հայուհեաց Ընկերութեան Օճնի օրիորդաց վարժարան 1910. Փետրուար 18» (Հ. Յակոբ Մ. Վ. Բոսեան, Բարձր Հայր, Բ., Վիեննա 1926, էջ 24):

| | |
|--------------------------|----------------------------|
| Տիկ. Փարիս Տօքթ. Աճէմեան | Գանձապետ |
| Տիկ. Լուիզ Ղազարոսեան | Համարակալ |
| Տիկ. Արեքնազ Մարտիկեան | Խորհրդական |
| Օր. Արուսեակ Թաշճեան | Խորհրդական ⁵⁴ : |

1908—1910 Ընկերութեան ընդհանուր ծախքը եղած է 122,965 ղուրուշ, իսկ պահեստի գումարը՝ 234,407.75 ղուրուշ⁵⁵:

1914ին Պոլսոյ Ժամանակ կը գրէ որ «Ազգանուէր Հայուհեաց Ընկերութիւնը» 1879ին հիմնուելէ վերջ՝ 15 տարի 10 դպրոց պահած է գաւառներու մէջ. 1908—1914ին ունեցած է 39 վարժարան. իր տարեկան ծախքն է 2000 ոսկի. Պոլսոյ մէջ ունի 390 բաժանորդ, որոնցմէ կը գոյանայ միայն 200 ոսկի. այդ բացը զոցելու համար Ընկերութիւնը ստիպուած է հանգանակութիւն ընել, հանդէս տալ եւ Մասնաճիւղերէն նպաստ սպասել: Թերթը կը շեշտէ որ Ընկերութեան առջեւ անհուն ասպարէզ կայ գործունէութեան, քանի որ շատ ու շատ տեղեր — Հայաստան ու Կիլիկիա — տակաւին դպրոց չկայ: Թերթը չափազանց քիչ կը գտնէ Բարեգործականի 100 ոսկի նպաստը Ընկերութեան, մինչդեռ, կ'ըսէ, «կրնար ան աւելի մեծ չափով օգնել⁵⁶»:

Զաւէն Պատրիարք, Հայութեան ուղղած մէկ Կոնդակին մէջ, 1914ին, Հայութեան մասնաւոր ուշադրութեան յանձնելով «Ազգանուէր Հայուհեաց»ը՝ կը յորդորէ որ օժանդակեն անոր, «որ հաստատուած է կրթութեան եւ գաստիարակութեան գործին ծաւալումը դիւրացնելու համար... եւ անմոռանալի արդիւնքներ տուած է եւ կուտայ⁵⁷»:

Ընկերութիւնը 1915ի սկիզբը կը դադրի գոյութիւն ունենալէ: Իր գոյքերն ու դրամը կը յանձնէ Ս. Պատրիարքին⁵⁸:

1919 Մարտին Պատրիարք Զաւէն Արքեպ. Տէր-Եղիայեան կը յորդորէ վերակազմել Ընկերութիւնը՝ «Ազգանուէր Հայուհեաց»ի գործունէութեան պէտքը զգալի ըլլալով⁵⁹:

⁵⁴ Անդ, էջ 64:
⁵⁵ Բողոք, Մարտի, 1912, էջ 13:
⁵⁶ Ժամանակ, 1914, Թ. 1796:
⁵⁷ Անդ, Թ. 1861:
⁵⁸ Անդ, 1919, Թ. 3464:
⁵⁹ Անդ:

Որքան զիտենք՝ ա՛յլ եւս վերակազմուած չէ «Ազգանուէր Հայունհեաց Ընկերութիւնը», բայց անոր անդամուհիները նախաձեռնարկ եղած են հեռագրով Տիկին Ուիլսոնի զիտում ընելու որ Մր. Ուիլսոն «շարունակէ իր համակրութիւնը այս ազգին, որուն քշուառ կիները ու որբուհիները իրենց փրկութիւնը կ'ակնկալեն ⁶⁰»:

*

«Ազգանուէր Հայունհեաց Ընկերութեան» մասին մեր այս տեսութիւնը թերի պիտի մնար, եթէ զանց ընէինք զէթ հարեւանցի գծերով ներկայացնելու անոր Հիմնադրուհին:

Զապէլ Յ. Խանգեան ծնած է Սկիւտարի Սելամսըգ (Սելամիէ) թաղը 1863 Հոկտ. 8ին (ըստ Կեանքի եւ Արուեստի [1935, էջ 125] 1863 Յուլ. 29ին եւ ըստ Նոր Լուրի [1934, թ. 4801] 1858ին: Իր հայրն է ժամացոյցի վաճառական Յովհաննէս Խանգեան: Մանկութեան առաջին դպրոցն եղած է Տիկ. Կառիւսի Փրանսական վարժարանը, միեւնոյն ժամանակ ստանալով տունը մասնաւոր դասեր: Յետոյ մտած է Եփեսոսի ձեռնարանը, ուր ուսուցիչ ունեցած է Խաչատուր Միսաբեան եւ Սիմոն Ֆելիկեան եւ 1876ին շրջանաւարտ եղած է ձեռնարանէն:

11 տարեկան էր, Ե. զասարանի աշակերտուհի, երբ 1874ին Հայրենիքի մէջ աշխատեց իր անգամ կ'երեւայ «Պանդուխտ անմխիթար» ոտանաւորով մը ⁶¹. Քիչ ետքը լոյս կը տեսնէ իր երկրորդ բանաստեղծութիւնը՝ «Ողջոյն Հրաժեշտի» ⁶²:

Պանճեան մասնաւոր ձեռք ունեցած է գծագրութեան: Ներսէս Արքեպ. Վարժապետեան Պատրիարքի ղեմքը գծած ըլլալով՝ զրկած էր Ս. Պատրիարքին, որ 1877 Հոկտ. 5 թուակեր նամակով մը իր գոհունակութիւնն ու օրհնութիւնը կը զրկէ ⁶³:

⁶⁰ Անդ, թ. 3556:
⁶¹ Հայրենիք, 1874, թ. 191:
⁶² Անդ, թ. 204: — Մասիսի մէջ (1874, թ. 1526) անտարազիր Յօդուածագիր մը աւարիկ էր թէ Պանճեանի առաջին ոտանաւոր բանագրութիւն մ'է Խոնձեմարանի Տեսուչ Խորէնի քան. Փէիլիպանեան թէ վարժ է ոտանաւոր գրելու. քան Խոնձեմարանի մէջ պահուած են առանձին տեսարակի մը մէջ՝ հետզհետէ հրատարակուելու համար: Եթէ Յօդուածագիրը կը փոփոխէ՝ կրնայ վարժարանի մը մէջ՝ հետզհետէ հրատարակուելու հիմնով կարողութիւնը (Մասիս, 1874, թ. 1539):
⁶³ Մասիս, 1877, թ. 2039:

Գրական կեանքի մէջ մուտք գործելէ յետոյ՝ Պանճեան գրած է առաւելագէտ Հայ Աստրէա ⁶⁴, Օր. Ալիս. Անախիտ եւ մանաւանդ Սիլվի ⁶⁵ ծածկանուններով: Իր երկերն են. 1. Գործնական Քերականութիւն արդի Աշխարհաբարի՝ տարրական, միջին եւ բարձրագոյն, որոնք բազմաթիւ տպագրութիւն ունեցած են. 2. Թանգարան, տարրական, միջին եւ բարձրագոյն, որոնք նոյնպէս շատ տպագրութիւն տեսած են. 3. Գործնական դարձեցում փրանս. - հայ. քարգմանութեան. 4. Յովեթ. 5. Աղջկան մը սիրտը. 6. Մագնիս. 7. Կնոջ հոգիներ:

Զապէլ Պանճեան 1881ին (ըստ Նոր Լուրի՝ [1934, թ. 4801] 1882ին) ամուսնացած է Պ. Կ. Տօնէլեանի հետ եւ ունեցած աղջիկ մը՝ Ատրիս: Ամուսնութեան առաջին 8 տարիները անցուցած է Պիլէճիկ, Պրուսա եւ Անկիւրիա, միշտ մօտէն հետաքրքրուելով այդ տեղերու կրթական գործով: Պոլիս վերադարձած է 1889ին: Ամուսնոյն մահէն վերջ՝ 1901ին կը պսակուի ծանօթ գրագէթ Հրանտ Ասատուրի հետ, որմէ կ'ունենայ նոյնպէս աղջիկ մը՝ Էմմա:

Տիկ. Զապէլ Ասատուր բեղուն գործունէութիւն ունեցած է ուսուցչական ասպարէզի վրայ՝ երկար տարիներ դասախօսելով Խայեան, Կեղրոնական եւ Համազգեաց վարժարաններու մէջ ո՛չ թէ իրրեւ սովորական ուսուցչուհի մը, այլ իրրեւ մոխրութիւն մը հայերէն արդի լեզուի եւ գրականութեան: Հանրային գործունէութեան սկիզբ կրնայ նկատուիլ 1874 տարին, երբ՝ թելագրութեամբ ձեռագործի ուսուցչուհի Սրբուհի Աշնեանի՝ քանի մը ընկերուհիներով հիմը կը դնէ իրար օգնութեան կազմակերպութեան մը — Նպաստամատոյց Ընկերութեան — նպատակ ունենալով աղքատ աղջկանց գրեական կիստայքը հոգալ ⁶⁶:

Իր գլուխ գործոցը պիտի մնայ սակայն «Ազգանուէր Հայունհեաց Ընկերութիւնը», որուն ո՛չ միայն հիմնադիրը, այլ եւ հոգին եղաւ գոհելով անոր իր կեանքին լաւագոյն ժամանակը, իր մտքին ամբողջ տաղանդը եւ ազգին համար գործելու եւ օգտակար ըլլալու իր բովանդակ աշխոյժը:

⁶⁴ Անդ, 1879, թ. 2360:
⁶⁵ Թէոդիկ, Ամէն. Տարեց. 1911, էջ 243:
⁶⁶ Հմայեակ քահ. Էքսէրճեան, Յիշատակարան յիսնամեայ Յորեյեանի երկից թաղից Աղբատարանում Հոգարարութեան Սկիւտարու, Կ. Պ. 1930, էջ 192:

Վատ եղան ժամանակներն ու պարագաները ու թոյլ շտուխն որ «Միացեալ Ընկերութիւնն» ու «Ազգանուէր Հայունհեաց» ողողեն Հայաստանը մանչերու եւ աղջկանց վարժարաններով, մինչեւ յետին դիւրն իսկ օժտելով փոքրիկ դպրոցով մը: Անոնց ամէնէն աշխոյժ գործունէութեան պահերուն՝ պետական արգելքները քանդելու խափանիչ դեր կատարեցին:

Հրանտ Ասատուրի մահէն վերջ (1929 Յունիս 5) Տիկ. Զապէլ Ասատուր տառապազին կեանք մ'անցուցած է մերթ հիւանդանոցի եւ մերթ իր Բերայի տան մէջ դարմանուելով: 1934 Յունիս 19ին կը կնքէ իր բեղուն կեանքը: Ազգային փառայեղ յուզարկաւորութեամբ մը վերջին արժանի յարգանքը կը մատուցուի եւ կը թաղուի Ծիշլիի գերեզմանատունը ⁶⁷:

Տիկ. Զապէլ Ասատուր՝ իրրեւ գրագիտուհի, հեղինակ եւ հանրային գործիչ՝ հայ իրական սեռի մեծագոյն ղեմքերէն մին է:

(Շարունակելի:)

Հ. Ե. ՊՕՂՈՍԵԱՆ

ԱՂԵՆՈՒՄ ԳԵՐՓՈՍՏԱՆԸ

1. ԾԱԳՈՒՄԸ

Հարկ է նախ շեշտել թէ Ալլահվերտեան անունով ոչ-կաթողիկէ մէկէ աւելի հայ դերդաստաններ գոյութիւն ունեցած են թէ՛ Ռուսահայոց եւ թէ՛ Թրքահայոց մէջ: Մեր ուսումնասիրութեան նիւթը կը կազմէ Հայ Կաթողիկէ Ալլահվերտեաններու պատմութիւնը: Կաթողիկէ Ալլահվերտեաններու մասին ճիշտ հին հայ Նախարարական Տուն մը — Կամարականները — ուզած էր ներկայացնել Սեբովբէ վ. Բանեան ¹, ջանալով ընթերցողին ներշնչել թէ առ այդ իր գտած «վիպիկութիւններն ու փաստերը»՝ «հազիւ կրնան ունենալ ամէն ազգի եւ Ազգատոհմի պատմագրութիւնը ²»: Դժբախտաբար սակայն

⁶⁷ Տե՛ս Ամէնուն Տարեցոյց, 1911, էջ 242—243: — Կեանք եւ Արուեստ, 1934, էջ 127—128 եւ 1935, էջ 125: — Նոր Լուր, 1934, թ. 4801, 4804: — Առիթ շնորհ ունեցած տեսելու թ. Ազատեանի գործը, Զապէլ եւ Հրանտ Ասատուր, Կ. Պ. 1937:
¹ «Ազգարանութիւն Ալլահվերտեան տոհմի», Բազմավէպ, 1908, էջ 241, 289, 377, 399:
² Անդ, էջ 242:

Բանեան վ. չէ կրցած ապացուցանել թէ կաթողիկէ Ալլահվերտեան Գերդաստանը ստուգիւ պայագատն է Հայոց Պատմութեան մէջ այնքան անուանի Կամարական Նախարարական Տան: Զէ՛ կրցած. վասն զի չունէր իրական փաստեր իր ձեռքը:

Բանեան Վարդապետ Կարնեցի ³ է եւ իրեն հայրենակից եղող Ալլահվերտեան Տոհմին ժամանակակից շառաւիղներուն ուղած է տալ «մէկ խրատայն մը եւ սրտի գուարնութիւն մը»՝ «արձանագրելով անոց աչքին եւ մտքին առջեւ Կամարական գերդաստանին Ազնուամեծար ազգաբանութիւնը, անոր հնութիւնն եւ դիւցազուն երեւելի անձանց փառութիւնը, որոնք այն ազգին մէջ ատեն ատեն ծաղկեր են, անոնց ինչ ինչ երեւելի գործքերը, քրիստոնէութեան մէջ ունեցած կրօնասիրութիւնն, ուղղափառութեան անկեղծ հաւատքը, եւ նոյն հաւատքին համար քաջած հալածանքները ⁴»:

Բանեանի նպատակն է Կամարական տոհմին «արի եւ հայրենասէր հոգին եւ երանդն» Ալլահվերտեաններու «սրտերուն մէջ միշտ վառ ու բորբոք պահել», «որով միայն կրնայ ասանկ հոչակեալ Ազգատոհմի շարունակ յաջորդութիւնը բարեբաղդութեամբ նոյն հիման վրայ տեսլու շատ դարերու մէջ ⁵»:

Գեղեցիկ է Բանեանի նպատակը — հին արի ու բարի տոհմի մը օրինակով՝ իրախոսել ներկայ հայրենակից տոհմի մը գաւակները՝ ըլլալու եւ մնալու միշտ արի, բարի՝ կաթողիկէ եկեղեցոյ ծոցին մէջ: Հետեւաբար երկրորդական գծի վրայ կը մնայ հարցը թէ կա՞ն իրական փաստեր ու տուեալներ, որոնցմով կարելի ըլլայ ապացուցանել թէ Ալլահվերտեանները շառաւիղներ են Կամարականաց: Բանեան պետք չի զգար իրական եւ ստոյգ փաստեր փնտռելու իր հաստատումին համար: Ան գոհ կ'ըլլայ ըսելով թէ Կամարականներուն ու Ալլահվերտեաններուն ունեցած «գաւառ, յատուկ անուանք... գործք ըստ տեղոյն, ըստ անձին եւ ըստ ժամանակին, երկար ժամանակ յատկացեալ մակամունք» զինքը համոզած են թէ Ալլահվերտեան «ազնիւ տոհմին վրայ կը ստուգուի Կամարական ազգին յաջորդութիւնն,

³ Անդ, էջ 242:
⁴ Անդ, էջ 290:
⁵ Անդ: